

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
Երևանի պետական համալսարանի
կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի
2019 թ. մայիսի 30-ին կայացած թիվ 11 նիստի

Գիտական խորհրդի 41 անդամներից նիստին ներկա էին 31-ը:

Օրակարգում՝

1. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքների քննարկման հարցը /գեկուցող Կ.Ա. Ղազարյան/:
2. Առկա ասպիրանտների ատեստավորման հարցը:
3. Կուրատորների հաշվետվության հարցը:
4. Ուսումնական ձեռնարկի /գրքի/ տպագրման երաշխավորման հարցը:
5. ԵՊՀ ինտրանետ համակարգում դասախոսությունների տեղադրման հարցը:

ԼՍԵՑԻՆ՝ Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքների քննարկման հարցը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ՝ Կենսաբանության ֆակուլտետի դեկանի տեղակալ Կ.Ա. Ղազարյանը, ով ամփոփելով ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքները նշեց, որ բարձր է գերազանց գնահատականներ ստացող ուսանողների թիվը: Քննարկվեց նաև ուսանողների հաճախումների հարցը: Արտահայտվեց կենսաբանության ֆակուլտետի դեկան, պրոֆ. Է. Ս. Գևորգյանը: Նա խոսեց այն մասին, որ այժմ, երբ հաճախումների համար նախատեսված 2 նիշը հանված է, նկատվում է դասերին հաճախումների թվի կտրուկ նվազում և ոչ կանոնավոր հաճախումներն ուղղակիորեն անդրադառնում են ուսանողի գիտելիքի որակի վրա: Հետևաբար, դասահաճախումները բարելավելու նպատակով անհրաժեշտություն է առաջանում վերականգնել դասերին հաճախելու համար նախատեսված 2 նիշը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Առաջարկել վերականգնել դասերին հաճախելու համար նախատեսված 2 նիշը:

ԼՍԵՑԻՆ՝ Առկա ասպիրանտների ատեստավորման հարցը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ՝ Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, կ.գ.դ. պրոֆ. Ա.Հ. Թոչունյանը, կենդանաբանության ամբիոնի վարիչ, կ.գ.դ., դոցենտ Մ.Ս. Առաքելյանը: Նշվեց, որ

ասպիրատների կողմից հաշվետու ժամանակաշրջանում կատարվել է պլանով նախատեսված աշխատանքները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Ատեստավորել՝

- ԵՊՀ Կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի ասպիրանտ **Հեղինե Գևորգյանին**, քանի որ նա հաշվետու ժամանակաշրջանում կատարել է պլանով նախատեսված աշխատանքները: Գիտական ղեկավար՝ Կ.Ա. Թոչունյան:
- ԵՊՀ Կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի ասպիրանտ **Սուսաննա Գևորգյանին**, քանի որ նա հաշվետու ժամանակաշրջանում կատարել է պլանով նախատեսված աշխատանքները: Գիտական ղեկավար՝ Ա.Հ. Թոչունյան:
- ԵՊՀ Կենսաբանության ֆակուլտետի կենդանաբանության ամբիոնի՝ ասպիրանտ **Հռիփսիմե Աթոյանին**, քանի որ նա հաշվետու ժամանակաշրջանում կատարել է պլանով նախատեսված աշխատանքները: Գիտական ղեկավար՝ Ս.Ա. Աղայանին:

ԼՍԵՑԻՆ՝ Կուրսատորների հաշվետվության հարցը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ՝ Ուսումնական խորհրդատուներ՝ Ա.Վ. Ասլանյանը (Կենսաբան I կուրս), Է.Խ. Բարսեղյանը (Կենսաքիմիա I կուրս), Ի.Վ. Շահազիզյանը (Կենսաբան I կուրս/ հեռակա): Ելույթ ունեցողները ներկայացրեցին հաշվետվություններ, որտեղ նշված էին իրենց կողմից կատարված աշխատանքները, առաջ եկած դժվարություններն, ինչպես նաև որոշ առաջարկներ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Ուսումնական խորհրդատուների կատարած աշխատանքները գնահատել բավարար:

ԼՍԵՑԻՆ՝ Ուսումնական ձեռնարկի /գրքի/ տպագրման երաշխավորման հարցը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ՝ կենսաբանության ֆակուլտետի ղեկան, պրոֆ. Է. Ս. Գևորգյանը, Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, կ.գ.դ. պրոֆ. Ա.Հ. Թոչունյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Երաշխավորել հրատարակման կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի կողմից ներկայացրած Թոչունյան Ա.Հ., Բարսեղյան Է.Խ., Կարապետյան Հ.Մ. «Օտարածին միացությունների՝ քսենոբիոտիկների կենսաքիմիա» ուսումնական ձեռնարկը:


ԼՍԵՑԻՆ՝ ԵՊՀ ինտրանետ համակարգում դասախոսությունների տեղադրման հարցը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ՝ կենսաբանության ֆակուլտետի դեկան, պրոֆ. Է. Ս. Գևորգյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Երաշխավորել Իրինա Արծրունի «Ֆերմենտային կինետիկայի հիմունքներ» առարկայի դասավանդումը ընդգրկող թեմաների տեղադրումը:

Գիտական խորհրդի նախագահ՝

ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ.



Է. Ս. Գևորգյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

դոցենտ՝ Ի.Վ. Շահազիզյան

